ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱԼԵՆ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Միջազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը հազարամյակներ շարունակ կարևորվել է ազգ-պետությունների անվտանգության ապահովման օրակարգերում: Քաղաքակրթական ու քաղաքական զարգացման տարբեր փուլերում պետություններն այդ խնդիրը լուծել են ինչպես անհատական ջանքերի, այնպես էլ դաշինքների միջոցով: Այս առումով միջազգային հարաբերությունների զարգացման ներկա փուլում միջազգային ու տարածաշրջանային անվտանգության ապահովման իրողությունների տեսանկյունից ամենագործունակ ու ազդեցիկ դաշինք է համարվում Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ), որը ձևավորման, կայացման ու զարգացման բավական երկար ճանապարհ է անցել:

Երկրորդ աշխարհամարտը և նրա ելքով պայմանավորված՝ Արևմուտք-ԽՍՀՄ առճակատումը, որը քաղաքագիտական ու միջազգային հարաբերությունների պատմության մեջ հայտնի է «սառը պատերազմ» անվանմամբ, մինչև 20-րդ դարի վերջ պայմանավորեց աշխարհում ուժային հարաբերակցության միտումները և անվտանգության բնույթը: Լինելով բլոկային մրցակցության ձևաչափ՝ սառը պատերազմը մի կողմից ամփոփում էր հավաքական պաշտպանության համակարգի բաղադրիչները[1] (տե՛ս ՆԱՏՕ-ի ձևավորման հիմնարար փաստաթուղթը՝ «հոդված 4»), մյուս կողմից ԽՍՀՄ-ի ու «Վարշավայի պակտի»՝ սոցիալիստական երկրների միջև առկա փոխօգնության ու ռազմական օժանդակության տրամադրման իրավապայմանագրային բազան: Անվտանգության այս իրողությունները երկու հակադիր կողմերի մոտ էլ դրսևորվում էին համապատասխան հայեցակարգային դրույթների, սկզբունքների, նորմատիվ-իրավական ակտերի, գործողությունների պլանների տեսքով: Այս առումով առանցքային դերակատարում ունեին հատկապես կողմերի որդեգրած հրապարակային ու գաղտնի ռազմավարական հայեցակարգերը, որոնք ամփոփում էին նրանց անվտանգային ու ռազմական նպատակները, առաջադրվող խնդիրներն ու դրանց լուծման համար ընդունելի մոտեցումները, «վտանգ-ան-

[1] Տե՛ս «The Strategic Concept for the Defense of the North Atlantic Area», 19.10.1949, p.1 http://www.nato.int/docu/ stratdoc/eng/a491128a.pdf

վտանգություն» կոլեկտիվ ընկալման տիրույթը, ինչպես նաև փիլիսոփայական-արժեքային և տեխնիկական-գործընթացային բաղադրիչները: Այսինքն՝ ռազմավարական հայեցակարգերի հետազոտությունը հնարավորություն է տալիս վեր հանելու ու գնահատելու հակադրության տվյալ կողմի քաղաքական ու ռազմավարական վարքը, դրա փոխակերպման միջակայքը և դրսևորումները, չափելու դրա հնարավոր հետևանքները միջազգային անվտանգության ապահովման համատեքստում: Այս առումով մեր հետազոտության խնդիրը սառըպատերազմյան ու հետսառըպատերազմյան իրողությունների ներքո Հյուսիսատլանտյան դաշինքի ռազմավարական հայեցակարգերի դինամիկայի ուսումնասիրությունն է, որի նպատակն է պարզել, թե Դաշինքի՝ որպես միջազգային անվտանգության առանցքային օղակի անվտանգության խնդիրները որքանով են փոխակերպվել և ներկայումս ինչ բնույթ ու ազդեցություն ունեն միջազգային անվտանգության վրա:

1949 թ., հիմնադրումից ի վեր, Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը միջազգային ռազմաքաղաքական իրողություններին համահունչ մշակել է ռազմավարական տարբեր հայեցակարգեր, որոնք ժամանակի ու իրողությունների ազդեցության ներքո փոխվել ու բարեփոխվել են: Իր հիմքում ունենալով ԽՍՀՄ-ին ու կոմունիստական գաղափարախոսության տարածմանը դիմագրավելու առաջնահերթությունը՝ ՆԱՏՕ-ն մինչև 1990-ականների կեսերը իր որդեգրած հայեցակարգում ԽՍՀՄ-ը, ապա նաև ՌԴ-ն դիտում էր որպես իր հիմնական ռազմական սպառնալիք: Այս ժամանակահատվածում ՆԱՏՕ-ի որդեգրած ռազմավարությունների առանցքը Եվրոպայում ԽՍՀՄ-ից սպասվող մշտական վտանգին հակադարձելու գերակայությունն էր: 1950 թ. հունվարի 6-ին Դաշինքի ընդունած՝ «Զսպման և պաշտպանության» ռազմավարություն անվամբ առաջին հայեցակարգում[2] որպես ՆԱՏՕ-ի հիմնական նպատակ հռչակվում էր ԽՍՀՄ «ագրեսիայի զսպումը», իսկ անդամ երկրները հայտարարում էին հնարավոր ռազմական հարձակման պարագայում միմյանց օժանդակելու մասին: Այս հայեցակարգում Դաշինքի կարևորագույն խնդիրներից էին ԽՍՀՄ-ի հանդեպ ռազմական գերակայություն հաստատելը և ԱՄՆ-ի միջուկային պոտենցիալի վրա հիմնվելը:

1954 թվականի նոյեմբեր 22-ին Դաշինքի ընդունած «Վահանի և սրի» ռազմավարությունն ածանցվում էր «զանգվածային վրեժխնդրության» ամերիկյան հարացույցից և ենթադրում էր ԽՍՀՄ-ի հետ ցանկացած բախման դեպքում միջուկային զենքի անհապաղ կիրառում: Որպես «սրի» գործառույթ իրականացնող ուժ դիտվում էր ԱՄՆ-ի միջուկային զինանոցը, իսկ «վահանի» դերում եվրոպական և ատլանտյան ճակատներում տեղակայված ՆԱՏՕ-ի երկրների սովորական զինված ուժերն էին:

Դաշինքի՝ 1957 թ. «Զանգվածային պատասխան հարվածի» ռազ-

[2] «Հյուսիսատլանտյան տարածաշրջանի անվտանգության ռազմավարական հայեցակարգ» պաշտոնական անվանում:

մավարության մեջ (որի հիմքը ԱՄՆ-ի միջուկային անվտանգության հայեցակարգն էր, ինչպես նաև այսպես կոչված «Երեք իմաստունների կոմիտեի» զեկույցը) խոսվում էր ՆԱՏՕ-ի քաղաքական դերակատարության ավելացման անհրաժեշտության, ներքին հակամարտությունները խաղաղ ճանապարհով լուծելու, տնտեսական, գիտական, մշակութային և տեղեկատվական գործակցության կարևորության մասին:

1962-63 թթ. «Առաջնային պաշտպանության» ռազմավարության հիմքում դաշինքի տարածքի զգալի մասի կորուստը կանխելու անհրաժեշտությունն էր: Այս հայեցակարգը փաստորեն նախատեսում էր միջուկային զենքի կիրառում ռազմական բախման ամենավաղ փուլում:

1966-67 թթ. «Ճկուն արձագանքման» ռազմավարությունը նախատեսում էր համընդհանուր միջուկային և տեղային պատերազմների վարում: Ընդ որում՝ Դաշինքում ավելի հավանական էին համարվում տարածաշրջանային սահմանափակ բնույթի զինված բախումները, որոնցում հաջողությունը պետք է ապահովվեր ազդեցության քաղաքական, տնտեսական, դիվանագիտական և ուժային մեթոդների ճկուն գործածման, ինչպես նաև ագրեսիայի ծավալներին ու բնույթին համապատասխան սովորական զինված ուժերի ու միջուկային զենքի կիրառման ճանապարհով: Նշյալ հայեցակարգում ներկայացվում էր ՆԱՏՕ-ի դեմ ռազմական ագրեսիան դիմագրավելու երեք սցենար. 1) անմիջական պաշտպանություն հակառակորդի կողմից ընտրված հարձակման եզրագծի սահմաններում, 2) նպատակային ռազմական սրացում, որը ենթադրում էր հնարավոր այնպիսի քայլերի հավելյալ խմբաքանակ, որոնք, ըստ ճգնաժամի զարգացման դինամիկայի, կարող էին ինչ-որ փուլում հանգեցնել միջուկային զենքի կիրառման, 3) ընդհանուր միջուկային պատասխան հարված, որը դիտարկվում էր որպես հակադարձման (զսպման) ծայրահեղ միջոց:

Վերլուծելով ՆԱՏՕ-ի ռազմավարական վերոնշյալ հայեցակարգերի հիմնական սկզբունքներն ու որդեգրած ռազմաքաղաքական վարքի մոդելները՝ պարզ է դառնում, որ դրանք առկա ռազմաքաղաքական իրողությունների հայելային արտացոլումն էին և պայմանավորված էին մի քանի կոնկրետ հանգամանքներով.

- ԽՍՀՄ-ի հետ հակադրության գլոբալ միտումներով ու փոխադարձ ոչնչացման հնարավորություններով,
- հակադրության կողմերի քաղաքականության մեջ ռազմական բաղադրիչի դոմինանտությամբ,
- Եվրոպայում ԽՍՀՄ (ՌԴ)-ից թե՛ հոգեբանական, թե՛ ռազմական մեծածավալ ներուժի կուտակմամբ,
- ՆԱՏՕ-ի՝ որպես հավաքական պաշտպանության վրա հիմնված ռազմաքաղաքական դաշինքի բնույթով ու դոմինանտ անդամ երկրի՝ ԱՄՆ-ի ռազմավարական շահերով:

Սակայն 20-րդ դարի 80-ականներից ի վեր որակական փոխա-

կերպման ենթարկվեց ՆԱՏՕ-ԽՍՀՄ հակադրությունը, որն ազդեց կողմերի որդեգրած քաղաքականության, «սպառնալիքի» ու «վտանգի» ընկալման փիլիսոփայության վրա: Այդ փոխակերպումները պայմանավորված էին մի շարք հանգամանքներով ու իրողություններով: Եթե նախկինում ԽՍՀՄ որդեգրած ռազմավարության մեջ «Արևմուտքի» հետ հակադրության վերջնանպատակն առավել լայն ու համընդգրկուն էր՝ հեղափոխությունների ճանապարհով աշխարհով մեկ տարածել կոմունիստական գաղափարախոսությունը և այդ ճանապարհով հաստատել խորհրդային գերիշխանություն, ապա 1953 թ. Ստալինի մահվանից, Արլ. Եվրոպայում ռազմաքաղաքական իրավիճակի որոշակի փոփոխություններից, Եվրոպայում ընդհանուր անվտանգության համակարգ հաստատելու առաջարկից, ԽՍՀՄ-ի և ԳԴՀ-ի, ՉՍՍՀ-ի, ԳՖՀ-ի, ԼԺՀ-ի միջև պայմանագրերի կնքումից հետո խորհրդային մոտեցումները որոշակիորեն մեղմվեցին: Այս առումով առավել շոշափելի ու տեսանելի արդյունք գրանցվեց հակապես 1985 թ. հետո, երբ ԽՍՀՄ ղեկավար դարձավ Մ. Ս. Գորբաչովը, իսկ խորհրդային պետության զարգացման ռազմավարական ուղի ընտրվեց «Վերակառուցումը» (Перестройка):

ԽՍՀՄ-ի կենտրոնից վերահսկողության թուլացումը, տնտեսական նոր քաղաքականության ու ժողովրդավարական մոտեցումների ներդրման մասին բարձրաձայնելը և այդ ուղղությամբ որոշակի քայլերը խորքային ու, փաստորեն, անշրջելի փոփոխությունների հիմք դարձան՝ իրենց ուղղակի ու անմիջական արտացոլումներն ունենալով նաև ՆԱՏՕ-ի հետ շփումներում: ՆԱՏՕ-ի հետ ռազմական դիմակայության քաղաքականության փոխարինումը Եվրոպայում ապառազմականացման միտումների ներդրմամբ մեղմեց Եվրոպայում սառը-պատերազմյան անկայունության ընդհանուր իրավիճակը: Նոր փոփոխությունները, որ տեղ գտան ԽՍՀՄ-ում, արձանագրում էին, որ համաշխարհային հարթակներում այլևս դադարելու էին հավակնոտ քաղաքականությունն ու ՆԱՏՕ-ի նկատմամբ ագրեսիվ պահվածքը՝ ուշադրությունը կենտրոնացնելով սեփական խնդիրների համար ընդունելի լուծումներ գտնելուն:

Միջազգային նման փոխակերպումներին Հյուսիսատլանտյան դաշինքը որոշակիորեն արձագանքեց ՆԱՏՕ-ի 1990 թ. հուլիսի 5-6-ը Լոնդոնի գագաթնաժողովում[3]՝ ընդունելով հռչակագիր, որն ուրվագծում էր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների հետ հարաբերությունների զարգացման առաջարկները (քաղաքական և ռազմական ոլորտներից մինչև ՆԱՏՕ-ի հետ կանոնավոր դիվանագիտական կապերի հաստատում): Լոնդոնի հռչակագիրն արձանագրեց Դաշինքի որդեգրած նախկին հրապարակային մոտեցումների փոփոխությունը,

[3] Տե՛ս «London Declaration On A Transformed North Atlantic Alliance Issued by the Heads of State and Government participating in the meeting of the North Atlantic Council», http://www.nato.int/docu/comm/49-95/c900706a.htm

որը նախատեսում էր սառըպատերազմյան հակադրության իրավիճակից անցում համագործակցության գործելաոճի: Լոնդոնի գագաթնաժողովի եզրափակիչ ակտում արձանագրվեց, որ ՆԱՏՕ-ի համար արդեն պարզ է, որ ԽՍՀՄ կարգավիճակը անհետադարձ փոխվելու է, ուստի օր առաջ պետք է նոր մոտեցումներ մշակել «աշխարհն առանց ԽՍՀՄ-ի» սցենարում սեփական շահերի ու հյուսիսատլանտյան տարածաշրջանի անվտանգության ապահովման համար:

Դաշինքի անելիքների, ուստի առաջին հերթին նաև հայեցակարգային մոտեցումների փոփոխման գործընթացն իր տրամաբանական շարունակությունը ստացավ Հռոմի գագաթնաժողովում (7-8 նոյեմբերի 1991 թ.), որտեղ ՆԱՏՕ-ի փոխակերպման տեսանկյունից ընդունվեցին մի շարք կարևոր փաստաթղթեր, հռչակագրեր[4], զեկույցներ: Հռոմի գագաթնաժողովի հայեցակարգային «մեխ»-ը «Դաշինքի ապագա խնդիրների վերաբերյալ» («Արմելի պլան») զեկույցն էր[5], որի հիմքում ընկած էին ռազմաքաղաքական նոր իրողություններից (ԽՍՀՄ փլուզում և նոր պետությունների միջազգային անվտանգային թատերաբեմ մուտք) բխող «ճկուն արձագանքման», «հավաքական պաշտպանության» և «երկխոսության» սկզբունքները: Հայեցակարգը փաստում էր, որ Դաշինքը, հավատարիմ լինելով հավաքական պաշտպանության և ռազմական ուժի հնարավոր կիրառման իր ռազմավարությանը, Արլ. Եվրոպայի ու ԱՊՀ-ի «նոր» պետությունների հետ հնարավոր շփման գործընթացում միտում ունի որդեգրել երկխոսության վարք: Այսինքն՝ Դաշինքը նպատակ ուներ «ճգնաժամերի կարգավորման» սառրպատերազմյան սկզբունքներից անցում կատարելու «բոլոր շահառու երկրների հետ կառուցողական երկխոսության» մոդելին:

«Արմել»-ի զեկույցում Դաշինքը, հիմնարար նպատակ սահմանելով նախկին թշնամիների հետ երկխոսության միջոցով Եվրոպայում անվտանգության ու կայունության հաստատումը, զուգահեռաբար նվազեցնում էր միջուկային ուժի կիրառման առավելագույն ընդունելի շեմը՝ արձանագրելով, որ նման քայլի կգնա միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում, այսինքն՝ ոչ թե հակամարտության առաջնային փուլում, այլ նրա հնարավոր սրման պարագայում:

Միջազգային քաղաքական զարգացումները և (հատկապես 1991թ. դեկտեմբերի 26-ին ԽՍՀՄ կազմալուծումը) որպես դրանց հետևանք «նոր» հանրապետությունների մուտքը միջազգային քաղաքական ասպարեզ ժամանակագրորեն տեղի ունեցան Լոնդոնի ու Հռոմի գագաթնաժողովներից հետո՝ լիովին հիմնավորելով Դաշինքի՝ նոր մո-

---

[4] Հռոմի գագաթնաժողովում ընդունվեցին Դաշինքի ռազմավարական նոր հայեցակարգը, «Խաղաղության և համագործակցության Հռոմի հռչակագիրը», «Խորհրդային Միության զարգացումների և Հարավսլավիայում դաշինքի մոտեցումների վերաբերյալ հռչակագիրը»:

[5] Տե՛ս «Доклад о будущих задачах союза («План Армеля»), одобренный 44-й сессией совета Североатлантического союза" // http://www.lawrussia.ru/texts/legal_383/doc383a284x779.htm

տեցումներ որդեգրելու անհրաժեշտությունն ու կարևորությունը: Անհերքելի է, որ ԽՍՀՄ փլուզումը և միաբևեռ աշխարհի ձևավորումը միջազգային հարաբերությունների համակարգն առավել անվտանգ չդարձրին: Ավելին՝ միջազգային քաղաքական նշյալ գործընթացները նոր մարտահրավերներ ու սպառնալիքներ ծնեցին ինչպես Դաշինքի, այնպես էլ հետսառըպատերազմյան աշխարհի համար: Հետևաբար անհրաժեշտություն կար քաղաքական ու ռազմաքաղաքական իրականությանը համարժեք փոխակերպել Դաշինքի նախկին մոտեցումները:

Նոր իրողությունների համատեքստում, երբ ՆԱՏՕ-ի հոչակած սպառնալիքի աղբյուրը չեզոքացված էր, եվրոպական ու ամերիկյան փորձագիտական հանրույթի որոշ շրջանակներում բավական աշխույժ քննարկումների նյութ դարձավ ՆԱՏՕ-ի գոյության անհրաժեշտության հարցը: Հօգուտ ՆԱՏՕ-ի կազմալուծման հիմնական փաստարկն այն էր, որ այն լուծել է իր առջև դրված խնդիրը: Հակառակ պնդողները գտնում էին, որ նոր՝ «առանց ԽՍՀՄ աշխարհում» դեռ գոյություն ունեն միջուկային տերություն Ռուսաստանը, նաև Չինաստանը, Արլ. Եվրոպայի երկրները և հետխորհրդային նորանկախ 15 հանրապետությունները, որոնք առավելապես անկայունության ու տարածաշրջանային անկանխատեսելիության աղբյուր են, հետևաբար նաև սպառնալիք միջազգային անվտանգության և եվրատլանտյան արժեհամակարգի համար: Այսինքն՝ ՆԱՏՕ-ն ոչ թե պետք է լուծարվեր, այլ բարեփոխվեր անվտանգային ու ռազմաքաղաքական առկա իրողություններին համահունչ: Քաղաքական հետագա իրողությունները փաստեցին, որ առավել կենսունակ ու հիմնավոր էին ՆԱՏՕ-ի պահպանման ու բարեփոխման գործընթացների կողմնակիցների մոտեցումները, որոնց ներքո էլ Դաշինքը շարունակեց իր գոյությունը:

Իրապես, հետխորհրդային պայմաններում ՆԱՏՕ-ն հայտնվեց ոչ պակաս վտանգավոր իրավիճակում: Եթե նախկինում կար վտանգի մեկ հիմնական ու տեսանելի աղբյուր (ԽՍՀՄ-ը և «Վարշավյան պակտը»), ապա նոր պայմաններում փոխվեցին ու ընդլայնվեցին թե՛ վտանգների ցանկը, թե՛ դրանց տարածման աշխարհագրությունը և թե՛ բնույթն ու մեթոդները: Նշենք, որ նորանկախ երկրները դեռևս միայն անվտանգություն սպառողներ էին, ավելին՝ հստակ պատկերացում չունեին քաղաքական ու ռազմավարական սեփական հեռանկարի մասին: Ի դեպ՝ նորահայտ պետությունների անկախացումն ուղեկցվել էր բազմաթիվ, այդ թվում նաև ներքին անկայունությունների և միջէթնիկ հակամարտությունների ակտիվացմամբ, ինչը եվրոպական մայրցամաքում կայունությունը վտանգող բարդ կառավարելի սպառնալիքներ էր ի հայտ բերել[6]:

Սա էր այն կարևորագույն պատճառներից մեկը, որը դրդեց Հռոմի գագաթնաժողովում՝ ՆԱՏՕ-ի համապատասխանեցման գործընթացում

[6] ՆԱՏՕ-ի համար խնդրահարույց ու սպառնալիքների առումով ռիսկային երկրների թվին էին պատկանում Հայաստանն ու Ադրբեջանը, Վրաստանը, Ուկրաինան, արևելաեվրոպական որոշ երկրներ:

առանձնակի տեղ հատկացնելու Դաշինքի «ճգնաժամային կառավարման» գործառույթին[7]: Այն՝ որպես անվտանգությունն ու ճգնաժամային իրողությունները մեղմելու ու դրանք հաղթահարելու կարևոր եղանակ, նախատեսում էր ճգնաժամի կարգավորում նրա զարգացման վաղ փուլերում՝ նախահարձակ դիվանագիտության գործիքակազմի միջոցով: Սա հնարավորություն պիտի ստեղծեր թույլ չտալու հակամարտությունների ընդլայնումը, անկայունության ծավալների մեծացումը, ինչը կվտանգեր նաև հարևան երկրների ու տարածաշրջանների կայունությունը: Հայեցակարգում արձանագրվեց, որ Դաշինքը նախատեսում է իրավիճակի կարգավորման ուժային-ռազմական մեխանիզմներ գործի դնել միայն խնդրի լուծման բոլոր միջոցները սպառվելու դեպքում:

Փաստորեն նոր պայմանները Դաշինքին «ստիպեցին» ոչ միայն յուծարվել, այլև փոխել անվտանգության սեփական ընկալումները, ռազմավարական հայեցակարգերն ու դրանք իրականացնելու գործիքակազմը: Վերլուծելով ու համադրելով Լոնդոնի ու Հռոմի գագաթնաժողովներում հնչած մոտեցումները, ընդունված հռչակագրերն ու զեկույցները՝ կարող ենք փաստել, որ հետխորհրդային շրջանում Դաշինքի ուժային ու ռազմավարական փոխակերպմանը հատուկ էին հետևյալ առանձնահատկությունները.

- Դաշինքի ռազմավարությունը հիմնվում էր անվտանգության առավել լայն ընկալման վրա և նոր՝ առավել խորը հիմնավորումներ էր տալիս պաշտպանության հավաքական բնույթին՝ այն հանգեցնելով երկխոսության հիմքով համատեղ գործողությունների. հաշվի էր առնվում ոչ միայն կամ ոչ այնքան ավանդական վտանգների բնույթը, որքան ընթացիկ օրակարգում սպառնալիքների դինամիկան:
- Ռազմական նոր հայեցակարգով Դաշինքը հնարավոր ագրեսիային հակադարձելու պայմաններում հրաժարվում էր ծանր տեխնիկայով ու միջուկային մարտագլխիկներով հրթիռային համակարգերով զինված իր առաջապահ ստորաբաժանումները գործի դնելուց նպատակահարմար էր գտնում Եվրոպայի արևելյան սահմաններին տեղակայված իր ստորաբաժանումներում միջուկային բաղադրիչների քանակը նվազեցնել՝ անվտանգության նոր պայմաններում շեշտը դնելով առավելապես ոչ միջուկային ռազմական ուժերի կիրառման ճկունության ու շարժունակության վրա:
- ՆԱՏՕ-ում ռազմական գործոնն այլևս չէր դիտվում որպես ընդհանուր անվտանգության ապահովման միակ գործիք, առաջնահերթ էին համարվում Դաշինքի գործունեության քաղաքական դերակատարման մեծացումը, երկխոսության նոր ձևաչափերի ստեղծումը, «կոշտ» ու «փափուկ» անվտանգային մոտեցումների մեկտեղումը, աջակցությունը նոր գործընկերների դեմոկրատացմանն ու կանխատեսելի վարքին:

---

[7] Տե՛ս «The Alliance's New Strategic Concept, agreed by the Heads of State and Government participating in the Meeting of the North Atlantic Council», 07 Nov. 1991 - 08 Nov. 1991, http://www.nato.int/cps/en/natohq/ officialtexts 238 47.htm

• Դաշինքը մտադիր էր գործակցության ինստիտուցիոնալ մեխանիզմ ստեղծել, որը հնարավորություն կտար հաղորդակցվելու և աշխատելու նոր գործընկերների հետ: Այս համատեքստում Դաշինքը կարևոր դերակատարում ընձեռեց իր ստեղծած Հյուսիսատլանտյան համագործակցության խորհրդին՝ որպես «ՆԱՏՕ - նոր գործընկերներ» ձևաչափում շփվելու կարևոր հարթակի: Նախատեսվում էր, որ խորհրդին կանդամակցեն ՆԱՏՕ-ի և նախկին Վարշավայի պայմանագրի կազմակերպության, ԵԱՀԽ (ԵԱՀԿ) անդամ երկրները:

• ՆԱՏՕ-ի նոր ռազմավարությունը համապատասխանեցվեց միջազգային ուժային հարաբերակցության գոյություն ունեցող պատկերին, որը երաշխավորված խաղաղություն ապահովելու համար նախատեսում էր անցում «հակադրության» ռազմավարությունից «երկխոսության» ձևաչափի:

• Դաշինքն արձանագրում էր, որ միջազգային անվտանգության սպառնալիքները բխում են ՆԱՏՕ-ի հարևան ոչ անդամ երկրներից, և եթե որևէ փուլում դրանք սպառնալիք դառնան Դաշինքի համար, ապա կարժանանան ուժային նախահարձակ արձագանքի:

1991 թվականից Հյուսիսատլանտյան դաշինքը սկսեց գործուն ջանքեր գործադրել անվտանգության նոր իրողություններից բխող իր ինստիտուցիոնալ ու գործառութային փոխակերպումները կյանքի կոչելու ուղղությամբ: Նշենք, որ որպես այդ գործընթացի կատալիզատոր շոշափելի էին ՌԴ-ի միջազգային քաղաքական ու տնտեսական դերի թուլացումը, բուն Եվրոպայում էթնոքաղաքական հակամարտությունների աղբյուրների ի հայտ գալը, իսլամական արմատականության և միջազգային ահաբեկչության ծավալների աճը, եվրատլանտյան տարածաշրջանից վտանգավոր հեռահարության վրա գտնվող անկայունության ու անվերահսկելիության շրջանները, միջուկային սպառազինությունների ու զանգվածային ոչնչացման զինատեսակների չտարածման նկատմամբ վերահսկելիության թուլացումը, ասիական պետությունների և հատկապես Չինաստանի ռազմաքաղաքական ու տնտեսական հզորության աճը, Հնդկաստանի ու Պակիստանի կողմից միջուկային փորձարկումները, ինչպես նաև ԱՄՆ-Եվրոպա ուժային հարաբերակցության բնույթը:

Որպես Լոնդոնում ու Հռոմում սահմանված նոր առաջնահերթությունների և գործակցության հիման վրա անվտանգություն ապահովելու մոտեցման տրամաբանական շարունակություն՝ Դաշինքը նախաձեռնեց հռչակած նպատակները կյանքի կոչելու գործընթաց, և 1994 թ. հունվարին բրյուսելյան հանդիպման ժամանակ[8] ազդարարվեց ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ)[9] նախաձեռնության մեկնարկը: Ծրագրի շրջանակներում ՆԱՏՕ-ն Հյուսիսատլանտյան գոր-

[8] Տե՛ս «Ministerial Meeting of the North Atlantic Council» / North Atlantic Cooperation Council, NATO Headquarters, Brussels, 10-11 January 1994, Partnership for Peace: Invitation, http://www.nato.int/docu/comm/49-95/c940110a.htm

[9] Տե՛ս The Partnership for Peace; http://www.nato.int/cps/en/natolive/topics_50349.htm

ծընկերության խորհրդի (որը փոխարինել էր Եվրատլանտյան գործընկերության խորհրդին) անդամ երկրներին և Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդի (ԵԱՀԽ/Կ-ի) անդամ երկրներին առաջարկեց միանալ ՆԱՏՕ-ի հետ համագործակցության՝ ԳՀԽ-ի ծրագրին: Վերջինս Դաշինքի հետ անհատական գործակցության ծրագիր էր՝ ուղղված նոր տարածաշրջանների և նորանկախ երկրների հետ քաղաքական, ժողովրդավարական կառավարման, քաղաքացիական-ռազմական բարեփոխումների իրականացմանը, համատեղ զորավարժությունների անցկացմանը, գիտական, ռազմաբժշկական, ռազմական պլանավորման ու ռազմական կրթության ոլորտներում գործակցությանը, կադրերի վերապատրաստմանն ու խորհրդատվություն տրամադրելուն: Սա կարևոր հարթակ էր ՆԱՏՕ-ի փոխակերպման գործընթացներում նոր գործընկերների հետ հարաբերվելու, նրանց անվտանգային կարիքները և սեփական ռազմավարական ուղեգծի հեռանկարները հստակեցնելու համար: ԳՀԽ-ն, կարևոր դերակատարում ստանձնելով ՆԱՏՕ-ի նոր գործընկերների հետ հարաբերման միջակայքում, ըստ էության, գործուն մեխանիզմ էր, որը հնարավորություն էր տալիս Դաշինքին իր հարևան տարածաշրջանները բարեփոխելու և դարձնելու առավել անվտանգ ու կանխատեսելի[10]:

Ակնհայտ էր, որ մրցակցային նոր իրողությունների ներքո անվտանգության տեսանկյունից սա առաջին հերթին ՆԱՏՕ-ին անհրաժեշտ էր նոր բնույթի սպառնալիքներից ու հնարավոր վտանգներից իրեն ապահովագրելու, դրանք առավել կառավարելի ու կանխատեսելի դարձնելու համար: Քաղաքական տեսանկյունից ԳՀԽ-ն այն «փափուկ» հարթակն էր, որը հնարավորություն էր տալիս Դաշինքին գործակցության եզրեր գտնելու ինչպես Արլ. Եվրոպայի, Բալթյան, այնպես էլ Հարավային Կովկասի երկրների հետ: Մյուս կողմից՝ ԳՀԽ-ն մեծ կարևորություն ուներ նաև նորանկախ երկրների պետականաշինության, ռազմաքաղաքացիական բարեփոխման, անվտանգային ռազմավարությունները ու զարգացման տեսլականը հստակեցնելու, մշակելու, ինչպես նաև ավելի մրցունակ, տնտեսապես ու ռազմապես առավել հզոր բևեռի՝ «Արևմուտքի» հետ հարաբերություններ կառուցելու տեսանկյունից: Նշենք, որ արևելաեվրոպական երկրներում ԳՀԽ-ի ներդրումից հետո միջազգային քաղաքական շրջանակներում առաջին անգամ սկսեցին խոսել ՆԱՏՕ-ի ընդլայնման մասին:

Հարկ է նշել, որ Դաշինքի հայեցակարգային փոխակերպման ու նոր քաղաքականություն որդեգրելու տեսանկյունից կարևոր է դիտարկել նրա հարաբերությունները Ռուսաստանի հետ: Այս համատեքստում Դաշինքն

[10] ԳՀԽ-ն առաջարկում էր ծրագրին անդամակցելու և գործակցությունը խորացնելու հետևյալ փուլերը՝ «Շրջանակային փաստաթղթի» ստորագրում, «Ներկայացման փաստաթղթի» մշակում և տրամադրում Դաշինքի ղեկավարությանը, «Անհատական գործընկերության ծրագրի» համաձայնեցում և ներկայացում, «Անդամակցության անհատական պլանի» մշակում ու իրականացում:

առանձնահատուկ վերաբերմունք մշակեց հզորության կայուն անկում արձանագրող, սակայն դեռ բավական ազդեցիկ բևեռ ՌԴ-ի հետ: Լինելով ԳՀԽ ծրագրի անդամ երկիր՝ Ռուսաստանին առաջարկվեց նոր որակի ու ձևաչափի հարաբերություններ, որոնք համապատասխանում էին ինչպես ՌԴ-ի ներուժին, այնպես էլ ՆԱՏՕ-ի շահերին՝ ՌԴ-ի հետ հարաբերվելու մյուս գործընկերներից տարբերվող ձևաչափով: 1997 թ. մայիսի 27-ին Փարիզում ՌԴ-ի և ՆԱՏՕ-ի միջև ստորագրվեց «Փոխհարաբերությունների, համագործակցության և անվտանգության հիմնադիր ակտը», որտեղ նշվում էր, որ հետայսու ՆԱՏՕ-ն և ՌԴ-ն հակառակորդներ չեն, և որպես հարաբերման հարթակ հիմնադրվում էր ՆԱՏՕ-ՌԴ մշտական համատեղ խորհուրդը[11]: Իրականում ՌԴ-ի հետ շփման այդ հարթակն ավելի շուտ ուներ խորհրդանշական-քաղաքական, քան համագործակցային նշանակություն, քանի որ այն ՆԱՏՕ-ի համար ծառայում էր իր՝ արդեն կայացրած որոշումների վերաբերյալ ՌԴ-ին տեղյակ պահելու ձևաչափ, իսկ վերջինս գործնականում զրկված էր ազդեցության որևէ մեխանիզմից:

1990-ականների կեսերից, որդեգրելով նոր գործընկերների հետ համագործակցության խորացման այսպես կոչված «բաց դռների» քաղաքականություն, Դաշինքը չէր բացառում, որ ինչ-որ փուլում հնարավոր է նրանց Դաշինքին անդամակցելու հրավեր ուղարկել: Այս համատեքստում, որպես Դաշինքի «բաց դռների» քաղաքականության վերահաստատում, 1997-ի հուլիսի 8-9-ը կայացած ՆԱՏՕ-ի՝ Մադրիդի գագաթնաժողովում Չեխիային, Հունգարիային և Լեհաստանին անդամակցության բանակցությունների հրավերներ ուղարկվեցին: Սա ՆԱՏՕ-ի՝ սառը պատերազմից հետո ընդլայնման առաջին քայլն էր, որին բավական սուր արձագանքեց ՌԴ-ն: Մադրիդյան գագաթնաժողովի ժամանակ տեղ գտան մի շարք կարևոր այլ իրադարձություններ, մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի և Ուկրաինայի միջև առանձնահատուկ գործընկերության խարտիայի ստորագրումը, Եվրատլանտյան գործընկերության խորհրդի առաջին հանդիպումը, Հռոմի 1991 թ. հայեցակարգի վերանայումը և նոր պաշտպանական մոտեցումների հաստատումը:

1999 թ. Վաշինգտոնում տեղի ունեցավ ՆԱՏՕ-ի հիմնադրման 50-րդ տարեդարձին նվիրված գագաթնաժողով, որի ժամանակ հաստատվեց Դաշինքի ռազմավարական նոր հայեցակարգը: Ըստ նոր առաջնահերթությունների՝ Եվրոպայի անվտանգությունը նույնացվում էր եվրատլանտյան տարածաշրջանի անվտանգության հետ, որտեղ ԱՄՆ-ը իրավահավասար անդամից աստիճանաբար վերածվում էր Դաշինքի դե ֆակտո և դե յուրե առաջնորդի:

Նոր փաստաթղթի գլխավոր առանձնահատկություններից էին

[11] Տե՛ս «Founding Act on Mutual Relations, Cooperation and Security between NATO and the Russian Federation signed in Paris», France 27 May. 1997 http://www.nato.int/cps/en/natohq/official_texts_25468.htm

նրա ընդլայնման և նոր երկրների ներգրավման հնարավորությունների նախանշումը[12], ինչպես նաև այն, որ նոր հայեցակարգում այլևս ոչինչ չէր ասվում Դաշինքի գործունեության մեջ ՄԱԿ-ի մանդատի անհրաժեշտության մասին: Այսինքն՝ Դաշինքը փաստացի չէր բացառում, որ իրավասու է գործել ինքնուրույն ոչ միայն պատասխանատվության սեփական տարածքում (անդամ երկրների տարածքներ), այլև դրա շրջանակներից դուրս: Նշենք, որ 1999 թ. հայեցակարգում ծրագրային այս դրույթների իրականացման համար անդամ երկրները ռազմական ուժերի բարեփոխման ծրագիր մշակեցին, որն արտացոլվեց այսպես կոչված «Պաշտպանական պոտենցիալ» նախաձեռնության մեջ: Դաշինքի նոր ռազմավարությունը, որն առավելապես քաղաքական բնույթ ուներ, շեշտը դնում էր ՆԱՏՕ-ի անդամների գործողությունների գաղափարախոսական բաղադրիչի, ժողովրդավարական ընդհանուր արժեքներին նրանց հավատարիմ լինելու, այդ արժեքները պաշտպանելու և տարածելու վրա[13]:

Եթե 1949 թ. Դաշինքի հռչակած հիմնական նպատակները տեղավորվում էին ՄԱԿ-ի կանոնադրության շրջանակներում և արտացոլվում էին Դաշինքի՝ «քաղաքական և ռազմական միջոցներով անդամ երկրների ազատության և անվտանգության պաշտպանության» պարտավորության մեջ, ապա ՆԱՏՕ-ի 1999 թ. Վաշինգտոնի գագաթնաժողովից հետո դրանք շոշափելի լրամշակման ենթարկվեցին: Մասնավորապես՝ ռազմավարական նոր հայեցակարգը մեծ հաշվով պետք է լուծեր հետևյալ վերախմբագրված խնդիրները[14].

- դառնար եվրատլանտյան տարածաշրջանի կայունության հիմք և ստանձներ անվտանգության խնդիրների շուրջ խորհրդակցությունների հրավիրող համաժողովի դեր,
- շարունակեր իրականացնել հումանիտար պարտավորությունները հակամարտությունների ու ճգնաժամերի կանխարգելման ուղղությամբ, այդ թվում՝ հումանիտար ինտերվենցիաների իրականացման գործիքակազմի միջոցով[15],
- զսպեր ՆԱՏՕ-ի անդամ յուրաքանչյուր երկրին ուղղված սպառնալիքները և պաշտպաներ դրանցից,
- հավատարիմ լիներ «բաց դռների» քաղաքականությանը նոր

---

[12] Տե՛ս «The Alliance's Strategic Concept». 24.04.1999. Para 9, http://www.nato.int/docu/pr/1999/p99-065e.htm

[13] 1999 թ. հայեցակարգում նշվում էր. «Դաշինքը ծառայում է ոչ միայն իր անդամների շահերին, այլև հակված է ՆԱՏՕ-ի արժեհամակարգը կիսող երկրների հետ այնպիսի պայմաններ ստեղծելուն, որոնք կամրապնդեն գործընկերությունը, համագործակցությունը և ընդհանուր քաղաքական օրակարգը» («The Alliance's Strategic Concept». 24.04.1999. Para 9, http://www. nato.int/docu/pr/1999/p99-065e.htm):

[14] Տե՛ս նույն տեղը:

[15] Հիշեցնենք, որ «հումանիտար ինտերվենցիա» ձևակերպման ներքո ՆԱՏՕ-ն 1993-96 թթ. ռազմական գործողություններ ծավալեց Հարավսլավիայում:

անդամների[16] ու տարածաշրջանների[17] նկատմամբ,

- նպաստեր խնդիրների արդյունավետ լուծմանը և ակտիվ մասնակցություն ունենար ճգնաժամային կարգավորման գործընթացներում՝ արձագանքելով դրանց ձևավորման վաղ փուլերում,
- աջակցեր Եվրատլանտյան տարածաշրջանում բազմակողմանի գործընկերությանը և համագործակցությանը գործընկեր երկրների (ՌԴ, Ուկրաինա և այլն) հետ:

Դաշինքի քաղաքականության մեջ կատարված սկզբունքային փոփոխությունները, որոնք արտացոլվեցին նախ 1991, ապա նաև 1999 թվականի փաստաթղթերում, այն էին, որ Դաշինքի ռազմավարությունը սկսեց հիմնվել անվտանգության առավել լայն ըմբռնման վրա՝ ածանցվելով «հավաքական պաշտպանության» և «անվտանգության հայեցակարգերի» միաձուլումից: Ռազմական գործոնը դադարեց լինել «համընդհանուր անվտանգության» միակ բաղադրիչ: Դաշինքի քաղաքականության կարևոր գործիքներ դարձան քաղաքական, տնտեսական, հասարակական և մշակութային բաղկացուցիչները: ՆԱՏՕ-ի՝ «ճկուն հակազդման» 1991 թվականի նախկին ռազմավարությունը 1999 թվականին լրացվեց հայեցակարգային նոր դրույթներով. Դաշինքի գործունեության հիմնարար սկզբունքներին, ինչպիսիք էին՝ «հավաքական պաշտպանությունը» և «երկխոսությունը», ավելացավ մի նոր սկզբունք՝ «գործակցությունը»: Այն ենթադրում էր բազմակողմանի կապերի ձևավորում և զարգացում հատկապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ երկրների հետ: Վերոնշյալը, իհարկե, չէր բացառում անհրաժեշտության դեպքում այդ երկրների նկատմամբ նաև ուժային միջոցների կիրառում, սակայն որպես հիմնական նպատակ ուներ անվտանգության միջավայրի փոփոխությամբ և նոր գործընկերների հետ համագործակցությամբ կառավարել ու ապագայում նաև նվազեցնել նրանցից բխող հնարավոր անկայունության ու վտանգի դրսևորումները:

Ընդհանրացնելով նշենք, որ ՆԱՏՕ-ի՝ 1991 և 1999 թվականների ռազմավարական հայեցակարգերի վերլուծությունը թույլ է տալիս կատարել հետևյալ եզրակացությունները:

- 1991 թ. ռազմավարական հայեցակարգը մշակվել է քաղաքական

---

[16] 1990-ականների սկզբին արևելաեվրոպական 12 երկրներ հայտարարեցին ՆԱՏՕ-ին անդամակցելու իրենց ցանկության մասին: 1999 թ. Չեխիան, Հունգարիան և Լեհաստանը դարձան ՆԱՏՕ-ի անդամ: 2004 թ. մարտի 29-ին Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան անդամակցեցին Դաշինքին, 2009 թ. ապրիլի 1-ին Ալբանիան ու Խորվաթիան անդամակցեցին Դաշինքին, իսկ 2016-ի մայիսի 19-ին Չեռնոգորիան դարձավ ՆԱՏՕ անդամ երկիր:

[17] ԳՀԽ-ից բացի՝ Դաշինքը, համաձայն տարածաշրջանային առաջնահերթությունների ու անվտանգային օրակարգերի, նոր երկրների ու տարածաշրջանների հետ իր համար սահմանեց գործակցային տարբեր ձևաչափեր: Այսպես՝ 1994-ից գործում է ՆԱՏՕ-ի «Միջերկրածովյան երկխոսություն» ծրագիրը, 2004-ից իրողություն դարձան «Համագործակցության ստամբուլյան նախաձեռնությունը», «ՆԱՏՕ-ՌԴ» և «ՆԱՏՕ-Ուկրաինա» խորհուրդները:

համագործակցության, սպառազինությունների վերահսկման և պաշտպանական ինքնաբավության հիմնական տարրերի շուրջ, որի համաձայն՝ սպառազինությունները վերահսկելու մեխանիզմները սահմանում էին կողմերի ռազմական հնարավորություններն ու պահանջները: Ավելին՝ «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին» պայմանագիրը Եվրոպայի տարածքը պետք է վերածեր «վերահսկելի անվտանգության» գոտու՝ ռազմական հարցերում բարձր մակարդակի թափանցիկությամբ՝ այդ կերպ ավելացնելով Դաշինքի և ԽՍՀՄ/ՌԴ-ի՝ կողմից միմյանց գործողությունների կանխատեսելիությունն ու փոխադարձ վստահությունը:

- Դաշինքի մոտեցումների քաղաքական կողմը ինչպես 1991 թ., այնպես էլ 1999 թ. հայեցակարգերում հիմնվում էր «Արմելի պլանի» վրա, որն էլ իր հերթին ածանցվում էր Հյուսիսատլանտյան դաշինքի գործունեության «հավաքական պաշտպանության» (ենթադրում էր ռազմական ներուժի ավելացում և օգտագործում անհրաժեշտության դեպքում) և «երկխոսության» (նախատեսում էր լարվածության թուլացում) սկզբունքներից, բայց՝ «ուժային դիրքերից»: Նոր պայմաններում այդ հայեցակարգը լրամշակվեց «համագործակցության» սկզբունքով:

- ՆԱՏՕ-ի կոալիցիոն հայեցակարգի ռազմական բաղադրիչը կենտրոնացած էր նախ և առաջ իր իսկ անդամ երկրների անվտանգությանը սպառնացող հակամարտությունների և ճգնաժամերի կանխարգելման ու հաղթահարման վրա և արտացոլում էր հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում «Արևմուտք»-ի ձգտումը՝ գերակա դիրք զբաղեցնելու եվրոպական մայրցամաքում:

- ՆԱՏՕ-ի 1999 թ. հայեցակարգը փաստորեն լեգիտիմացրեց երկու առանցքային գաղափար: Նախ՝ ՆԱՏՕ-ն հնարավորություն էր ստանում գործելու տարածաշրջանային կազմակերպության իրավական տիրույթի աշխարհագրությունից դուրս՝ վերածվելով համընդհանուր պատասխատվություն ունեցող դաշինքի: Երկրորդ՝ չնայած քաղաքական բաղադրիչի առանցքային լինելուն՝ ռազմական ուժը՝ որպես գործոն, շարունակեց կիրառելի մնալ Դաշինքի արտաքին քաղաքականության մեջ: Այս հանգամանքը բխում էր ԱՄՆ-ի ռազմավարության ռազմական ասպեկտներից և իր արտացոլումը գտավ Դաշինքի 1999 թ. ռազմավարության մեջ հետևյալ կերպ. «Եվրոպայում ԱՄՆ սովորական և միջուկային ուժերի ներկայությունը շարունակում է կենսական լինել Եվրոպայի անվտանգության ապահովման տեսանկյունից և անբաժանելիորեն պայմանավորված է Հյուսիսային Ամերիկայի անվտանգությամբ»[18]:

- 1991 և 1999 թվականների հայեցակարգերը փաստում են ՆԱՏՕ-ի հետևողականությունը ռազմավարական պլանավորման մեջ: Մասնավորապես՝ ՆԱՏՕ-ի 1990-ականների ռազմավարական հայեցակարգե-

[18] «Стратегическая концепция Североатлантического союза». Брюссель, 1999, с. 13.

րի դրույթների ընդհանրությունը, ի տարբերություն սառըպատերազմյան շրջանի, այն է, որ դա նվիրված չէ առանձին ռազմաքաղաքական խնդիրների, այլ հայեցակարգային լայն մոտեցում է հետսառըպատերազմյան Եվրոպայի, այնուհետև նաև ամբողջ աշխարհի կառուցակարգի նկատմամբ:

Շարունակելով Դաշինքի հայեցակարգային մոտեցումների և քաղաքականության փոխակերպման դիտարկումները՝ նշենք, որ այդ գործընթացում, բացի միջազգային հարաբերությունների ընդհանուր միտումների փոփոխությունից, կարևոր դեր ունեցան նորահայտ սպառնալիքները: Այս առումով կարևոր է հիշատակել 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններն ընդդեմ ԱՄՆ-ի, որոնք անվտանգության ապահովման նոր թիրախներ սահմանեցին ՆԱՏՕ-ի համար: Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին անգամ ՆԱՏՕ-ն, իր կանոնադրության 4-րդ կետի պարտավորություններին համապատասխան, Խորհրդի արտակարգ նիստ գումարեց՝ անդամ երկրներից մեկի նկատմամբ անմիջական վտանգին միացյալ ուժերով արձագանքելու համար: Որպես սեպտեմբերյան ահաբեկչական գործողությունների հետևանք՝ ԱՄՆ-ի առաջնորդությամբ ինչպես ՆԱՏՕ-ի ձևաչափով, այնպես էլ կոալիցիոն այլ կազմով, 2001 թ. Աֆղանստանում, իսկ 2003 թ. Իրաքում անցկացվեցին հակաահաբեկչական պատժիչ գործողություններ:

Դաշինքի փոխակերպմանը զուգընթաց՝ փոխվեցին նաև ՆԱՏՕ-ՌԴ հարաբերությունները: Եթե 1990-ականներին ՌԴ-ն իր ռազմավարական նշանակության ու ազդեցության ամենատարբեր ոլորտներում կայուն անկում էր ապրում, ապա 2000-ականներից սկսած՝ նախ այդ միտումները թուլացան, ապա սկսվեց հակառակ գործընթացը: Սրանում առանցքային դերակատարում ունեցավ ՌԴ նախագահի փոփոխությունը՝ Վ. Վ. Պուտինի նախագահ ընտրվելը: Նոր պայմաններում ՌԴ-ն փորձում էր վերադառնալ իր ազդեցության նախկին տարածաշրջաններ, քաղաքական և ռազմաքաղաքական ոլորտներում հակադրվել ՆԱՏՕ-ի «բաց դռների» քաղաքականությանը, մրցակցել մակրոտարածաշրջաններում ազդեցության գոտիների հաստատման ու վերահաստատման գործընթացներում: Այս իրողությունները պատճառ դարձան, որ ՌԴ-ի նկատմամբ Դաշինքի մոտեցումները փոխակերպվեն, և ՆԱՏՕ-ում որոշում կայացվի բաց դռների ու համագործակցության քաղաքականության ներքո վերադառնալ ՌԴ-ի հետ մրցակցային ավելի կոշտ քաղաքականության: Հարկ է նշել, որ Դաշինքի քաղաքականությանն ու որդեգրած ռազմավարությանը ՌԴ-ի սուր արձագանքը բավական տրամաբանական էր ու հասկանալի, քանզի Դաշինքի փոխակերպման գրեթե ողջ գործընթացն այս կամ այն կերպ իրականացվում էր ՌԴ-ի շահերի կամ դրանց իրականացման համար ոչ նպաստավոր պայմաններ ստեղծելու հաշվին: Նման որոշումներ ընդունվում էին ՆԱՏՕ-ի գագաթնաժողովների ժամանակ, որոնցից կդիտարկենք մի

քանիսը: Որպես վերոնշյալի դրսևորում կարելի է հիշատակել 2002 թ. Պրահայի գագաթնաժողովում Բուլղարիային, Էստոնիային, Լատվիային, Լիտվային, Ռումինիային, Սլովակիային և Սլովենիային Դաշինքի անդամակցության բանակցություններին հրավիրելը: Ավելի ուշ՝ 2004 թվականին, Ստամբուլում արդեն 26 անդամ երկրներով Դաշինքը որոշեց պահպանել աջակցությունը՝ ուղղված Բալկանների կայունությանը, մեկնարկեց ՆԱՏՕ-ի պաշտպանական-ծրագրավորման գործընթացը և արվեցին ռազմական ներուժի ավելացման քայլեր, զարկ տրվեց մերձավորարևելյան տարածաշրջանի երկրների հետ Դաշինքի գործակցությանը: 2006 թ. Ռիգայում օրակարգի մաս դարձան ՆԱՏՕ-ի ռազմական կարողությունների բարելավման պլանի ընդունումը, ՆԱՏՕ-ի արձագանքման ուժերի ինստիտուցիոնալ կայացումը, գործընկերների հետ հարաբերությունների խորացման ու ընդլայնման նախաձեռնությունները, Բոսնիա-Հերցեգովինային, Մոնտենեգրոյին և Սերբիային ԳՀԽ-ին միանալու հրավերները: 2008 թ. Բուխարեստի գագաթնաժողովում Ալբանիային և Խորվաթիային հրավեր ուղարկվեց՝ սկսելու ՆԱՏՕ-ի անդամակցության գործընթացը[19], որը զուգահեռվեց Դաշինքի ռազմական կարողությունների շարունակական զարգացման նախաձեռնություններով: 2009 թ. Ստրասբուրգում ՆԱՏՕ-ի 60-ամյակի նախաշեմին կարևորվեցին նրա «բաց դռների» քաղաքականության անխախտելիությունը և ՌԴ-ի հետ նոր օրակարգ կազմելու անհրաժեշտությունը:

Վաշինգտոնի ռազմավարական փաստաթղթից հետո Դաշինքի հաջորդ և առայժմ վերջին հայեցակարգն ընդունվեց Լիսաբոնում 2010 թ. նոյեմբերին 20-ին: ՆԱՏՕ-ի ռազմավարական նոր հայեցակարգում[20], ինչպես նաև հայեցակարգային մի շարք այլ փաստաթղթերում[21], նշվում էր ՆԱՏՕ-ի ոչ միայն աշխարհագրական, այլև գործառութային տարածության պատասխանատվության ընդլայնման մասին: «Լիսաբոն»-ի հայեցակարգը արտացոլում էր ՆԱՏՕ-ի ռազմավարական հեռանկարը, որը համաշխարհային զարգացման բոլոր ոլորտներում անվերապահ համընդհանուր տիրապետության հասնելն էր[22]: Հայեցակարգում որպես գլոբալ քաղաքականության կերտման ելակետեր էին հռչակ-

---

[19] Մակեդոնիան նույնպես կհրավիրվեր Դաշինք, երբ այդ պետության անվան շուրջ բանակցություններում համաձայնություն ձեռք բերվեր:

[20] Տե՛ս «Active Engagement, Modern Defence». Strategic Concept for the Defence and Security of the Members of the North Atlantic Treaty Organization adopted by Heads of State and Government in Lisbon 2010 // North Atlantic Treaty Organization: http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_68580.htm.

[21] Տե՛ս «Assured Access to the Global Commons» / Mark Barrett, Dick Bedford, Elizabeth Skinner, Eva Vergles // NATO. Allied Command Transformation: Norfolk, Vir-gina USA. 2011. April. 58 էջ http://www.act.nato.int/ globalcommons և Multiple Futures: Navigating towards 2030. Final Report // NATO. Allied Command Transformation: Norfolk, Virgina USA. 2009. April. http://www.act.nato.int/images/stories/events/2009/mfp/20090503_MFP_finalr ep .pdf

[22] ԱՄՆ ազգային անվտանգության ռազմավարության մեջ Հյուսիսատլանտյան դաշինքը որակվում է որպես ժամանակակից աշխարհում անվտանգության ապահովմանն ուղղված առաջադեմ դաշինք (տե՛ս «National Security Strategy» // The White House: 2010. May. էջ 41, http://www.whitehouse.gov/sites/default/files/ rssviewer/national_security_strategy.pdf.)

վում Դաշինքի 3 առանցքային սկզբունքերը՝ «հավաքական պաշտպանությունը/անվտանգությունը», «ճգնաժամային կառավարումը» և «համագործակցային հիմքով անվտանգությունը»[23]: Դրա հետ մեկտեղ՝ թարմացված ռազմավարությունը նախատեսում էր շարունակել եվրատլանտյան պաշտպանական բլոկից Դաշինքի անցումը համընդհանուր տրամաչափի անվտանգություն ապահովող կազմակերպության[24]: Նման պայմաններում ՆԱՏՕ-ն դառնում էր միակ ռազմաքաղաքական ինստիտուտը, որն ունակ էր ռազմական բաղադրիչով ապահովվելու այդ պատմական գործառույթը՝ փաստորեն ինչ-որ առումով ստանձնելով ՄԱԿ-ի հիմնարար դերակատարման տարրեր:

Այս համատեքստում կարևոր է մեջբերել ամերիկյան հետազոտող Պ. Ուորենի այն դիտարկումը, որ իր զարգացմանը զուգընթաց՝ Հյուսիսատլանտյան դաշինքը վերածվել է «հիբրիդային» բազմակողմ դաշինքի, որը խնդիրներ է լուծում ինչպես պաշտպանական, այնպես էլ անվտանգության ոլորտում՝ ընդգծված գաղափարական բաղադրիչներով[25]: Ի համեմատություն Դաշինքի նախորդ հայեցակարգերի՝ վերջինը կառույցի գործառման ակնհայտ նոր ոլորտներ է սահմանում, որոնք, բացի զուտ քաղաքական ու ռազմական բաղադրիչներից, անվտանգության ապահովման ավանդական գծերից, խնդիր ունեին նաև վերահսկողություն սահմանել էներգետիկ անվտանգության, կիբերանվտանգության, ժողովրդագրական կառավարելիության նոր՝ նախկինում բացակա ոլորտների վրա[26]: Այս ամենը փաստում է մի կարևոր իրողություն. Դաշինքը գործառութային մակարդակում, բացի սեփական անվտանգության ու պաշտպանության տարածաշրջանից, հստակ տեսանելի պարտավորություններ է ստանձնել էներգետիկ (ենթակառուցվածքների) ու կիբերանվտանգության ոլորտներում՝ դրանով իսկ համաշխարհային գերիշխանության ցանցային մոդելի հաստատման նախադրյալներ

---

[23] Տե՛ս «Active Engagement, Modern Defence». Strategic Concept for the Defence and Security of the Members of the North Atlantic Treaty Organization adopted by Heads of State and Government in Lisbon 2010 // North Atlantic Treaty Organization: http://www.nato.int/cps/en/natolive/official_texts_68580.htm

[24] Տե՛ս **Петров В.** Основные итоги Лиссабонского саммита НАТО // "Зарубежное военное обозрение", 2011, № 2, էջ 3:

[25] Տե՛ս **Warren P. T.** Alliance History and the Future NATO: What the Last 500 Years of Alliance Behavior Tells Us about NATO's Path Forward / 21st Century Defense Initiative At Brookings – Policy Paper. 2010, June 30, էջ 58:

[26] Այս առումով հատկանշական է մեջբերել ԱՄՆ նախկին փոխնախագահի 2009 թ. փետրվարին Մյունխենի 45-րդ անվտանգության համաժողովում հնչեցրած մոտեցումները: Նրա կարծիքով. «Նոր սպառնալիքների և նոր իրականությանը ընդառաջ՝ Դաշինքը պետք է դրսևորի վճռականություն և նոր հնարավորություններ հաջողության հասնելու համար: Առավել վտանգավոր զինատեսակների վերացման, ահաբեկչության դեմ պայքարի և կիբերանվտանգության ապահովման հետ մեկտեղ՝ ՆԱՏՕ-ն պետք է ընդլայնի էներգետիկ անվտանգության գործիքակազմը և պատրաստ լինի գործելու ավանդական պատասխանատվության գոտու ներսում և դրանից դուրս» (առավել մանրամասն տե՛ս «Remarks by Vice President Biden at the 45th Munich Security Conference February 7, 2009» // The United States Diplomatic Mission to Germany: http://germany.usembassy. gov/events/2009/feb-biden-security/):

ստեղծելով: Նման մոտեցումներին զուգահեռ՝ պայմանավորված Եվրոպայում ռազմաքաղաքական իրողությունների ու ՌԴ-ի համընդհանուր դերակատարման փոխակերպմամբ, ՆԱՏՕ-ն շարունակում է կարևորել ռազմական անվտանգության բաղադրիչների զարգացումը, որի ամենավառ դրսևորումը Եվրոպայում տեղակայված ՆԱՏՕ-ի ստորաբաժանումների ռազմական բաղադրիչների ամրապնդումն էր[27]:

Ամփոփելով Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության հայեցակարգային փոխակերպման գործընթացների վերլուծությունը՝ կարող ենք նշել մի քանի առանձնահատկություն, որոնք բնորոշեցին դրանց ինչպես տեսակը, այնպես էլ դինամիկան ու դերակատարումը միջազգային անվտանգության ապահովման գործընթացներում.

- Դաշինքի փոխակերպման առաջնային գործոն/կատալիզատոր դարձան միջազգային հարաբերությունների համակարգում առկա սպառնալիքների բնույթն ու կառուցվածքը:
- 1991 թ. միջազգային քաղաքական իրադարձությունները պայմաններ ստեղծեցին, որ Դաշինքի փոխակերպումը տեղի ունենար նոր տրամաբանությամբ՝ «հավաքական պաշտպանության» հայեցակարգից անցում կատարելով դեպի «հավաքական անվտանգության» դրույթների ռազմավարություն:
- Որպես նոր երկրների հետ շփման ու դրանից բխող՝ անկայունությանն ու սպառնալիքներին հակադարձելու մեխանիզմ հռչակվեց նոր տարածաշրջանների հետ երկխոսությունը, որն իրականացվում էր Դաշինքի մշակած՝ նոր գործընկերների դեպքում կիրառելի փոխակերպման ռազմավարություններով և գործողությունների պլաններով:
- Որակապես փոխվեց ՆԱՏՕ-ի խնդիրը. այն զուտ ռազմական գերակայությունից ձևափոխվեց քաղաքական, քաղաքացիառազմական ու գաղափարական, ենթակառուցվածքային ու անվտանգության ոլորտներում առաջատար դիրքեր ունեցողի:
- ՆԱՏՕ-ի ռազմաքաղաքական աննախադեպ ներուժը և գաղափարական ու արժեքային բաղադրիչները այն վերածեցին գլոբալ կայունության ապահովման հավակնություն ունեցող կառույցի:
- ՌԴ-ի միջազգային ու տարածաշրջանային դերակատարման անկումով կամ աճի տարբեր փուլերով պայմանավորված՝ ՆԱՏՕ-ն

[27] Նշենք, որ հետագայում՝ մասնավորպես 2012 թ. մայիսին Չիկագոյում, 2014-ի սեպտեմբերին Ուելսում և 2016-ի հուլիսին Վարշավայում տեղի ունեցան ՆԱՏՕ-ի գագաթնաժողովներ, որտեղ Լիսաբոնում ընդունված հայեցակարգը ենթարկվեց որոշ համալրումների ու խմբագրումների: Ընդունված փաստաթղթերը հիմնականում շեշտադրում ու փոխակերպում էին գործող հայեցակարգի որոշ դրույթներ, որոնց բովանդակությունը հանգում էր հետևյալին՝ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ռազմավարության իրականացման ավարտական փուլի անելիքներ, «Զսպման և պաշտպանական զեկույցի» ամփոփում և «Պաշտպանական փաթեթի» հաստատում, ՌԴ-ի հետ փոխհարաբերությունների փոփոխման հիմքով տարբեր նախաձեռնությունների իրականացում ՆԱՏՕ-ի զինված ուժերի բանակային կարողությունների ոլորտներում (հետախուզություն, վերահսկողություն և հայտնաբերում, օդային ոստիկանություն և այլն) և այլն:

փոփոխում ու սրբագրում է ռազմավարությունը՝ խուսանավելով սառըպատերազմյան գործիքակազմից մինչ համագործակցության ձևաչափեր ու կրկին վերադարձ դեպի սուր մրցակցային պայքար։

Բանալի բառեր – *ՆԱՏՕ, փոխակերպում, ռազմավարական հայեցակարգ, հավաքական անվտանգության համակարգ*

АЛЕН ГЕВОНДЯН – ***Специфика трансформаций стратегических концепций в Организации Североатлантического Договора***. – Статья посвящена концептуальной трансформации и последующему расширению НАТО после окончания «холодной войны». Проводится сравнительный анализ трёх стратегических концепций Североатлантического альянса – 1991, 1999 и 2010 годов.

Ключевые слова: *НАТО, трансформация, стратегическая концепция, система коллективной безопасности*

ALEN GHEVONDYAN – ***The Characteristics of the Transformation of the Strategic Concepts of the North Atlantic Treaty Organization***. – The article is devoted to the conceptual transformation and subsequent expansion of the activities of the North Atlantic Treaty Organization after the end of the Cold War. A comparative analysis of the three Strategic Concepts of the North Atlantic Alliance of 1991, 1999 and 2010 is conducted.

Key words: *NATO, transformation, strategic concept, collective security system*